Արձանագրություն N 3
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» Ապրիլի 2021թ.
ժ. 11:00

Մասնակցում են՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Անի Ղարիբջանյանը,
Անդամներ՝ Մարինա Դուրգարյանը և Լենա Միրզախանյանը.
Քարտուղար՝ Արթուր Բադալյանը:

I. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի մասին

Ընդունել ի գիտություն, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013 ծածկագրով ընթացակարգի սույն թվականի ապրիլի 8-ի գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին և «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ–ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում միայն «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ա) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 41-րդ և 42-րդ կետերը մերժել «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ–ի ներկայացված հայտը,

բ) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը չկայացած հայտարարել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 6-րդ չափաբաժինները,

գ) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով,

դ) հաստատել էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը,

ե) անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում.
Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

գնահատող անդամներ՝ _____ Մ. Դուրգարյան

_____ Լ.Միրզախանյան

քարտուղար՝ _____ Ա. Բադալյան